# Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

## «Խ. Աբովյանի անվան հայկական պետական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

## «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման եղանակով» ծրագիր

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2016թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան

# Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն | 7 |
| Ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն | 8 |
| Դրամաշնորհային գործառնական հաշվի հաշվետվություն | 9 |
| Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվություն | 10 |
| Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 11 |

Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ղեկավարությանը

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում ֆինանսավորվող «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» դրամաշնորհային ծրագրի (Ծրագիր) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև 2016թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին, ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին, Դրամաշնորհային գործառնական հաշվի և Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» դրամաշնորհային ծրագրի ֆինանսական վիճակի և 2016թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Դրամաշնորհային 8/16 CIF պայմանագրի և ՆՄՀ ղեկավար ձեռնարկի համապատասխան հոդվածների:

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամից (ՀՊՄՀ) Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի

GrantThornton

պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքի շեշտադրում*

Մենք ուշադրություն ենք հրավիրում դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից 2-րդ ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ղեկավարությանը՝ ՆՄՀ պահանջներին համապատասխանելու համար՝ հիմնված Համաշխարհային Բանկի Կրթության բարելավում ծրագրի վրա: Ուստի, դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող օգտագործել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար*

ՀՊՄՀ ղեկավարությունը պատասխանատու է սույն դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Դրամաշնորհային 8/16 CIF պայմանագրի և ՆՄՀ գործարկման ղեկավար ձեռնարկի համապատասխան հոդվածներին համաձայն դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հայտնորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,

որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե ՀՊՄՀ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

2020թ. հունվարի 20

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| ՀՀ դրամ | Ծանոթ. | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ակտիվներ* | | |
| Դրամաշնորհային ծրագրի կուտակային ծախսեր | | 97,595,712 |
| Ընդամենը ակտիվներ | | 97,595,712 |
| | | |
| *Ֆոնդեր և պարտավորություններ* | | |
| Դրամաշնորհային ծրագրի կուտակային ֆինանսավորում | 4 | 97,566,912 |
| Այլ միջոցներ | | 28,800 |
| Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ | | 97,595,712 |

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունվարի 20-ին՝

Ռուբեն Միրզախանյան
Ռեկտոր

Սուսաննա Հարությունյան
Գլխավոր հաշվապահ

Այս ծրագրի հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 14-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2016թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան

ՀՀ դրամ

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | ժամանա-կաշրջանի համար | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| *Ստացված ֆինանսավորում* | | | | | | |
| Դրամաշնորհային միջոցներ (ծանոթ. 4) | 87,810,211 | 87,810,211 | | | | |
| Համաֆինանսավորման միջոցներ (ծանոթ. 4) | 9,756,701 | 9,756,701 | | | | |
| Այլ ստացված միջոցներ | 28,800 | 28,800 | | | | |
| Ընդամենը | 97,595,712 | 97,595,712 | | | | |
| *Ֆինանսավորման օգտագործում* | | | | | | |
| Իրավասու ծախսեր | 97,595,712 | 97,595,712 | 97,621,651 | 97,621,651 | (25,939) | (25,939) |
| Ընդամենը | 97,595,712 | 97,595,712 | 97,621,651 | 97,621,651 | (25,939) | (25,939) |
| Շրջանառու կապիտալի զուտ աճ | - | - | | | | |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 14-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

2016թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան

ՀՀ դրամ

| # | Ծախսատեսակ | Նախահաշվով նախատեսված ծախսեր | | | Փաստացի կատարված ծախսեր | | | Տարբերություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դրամաշնորհ | Համաֆինանսավորում | Ընդամենը | Դրամաշնորհ | Համաֆինանսավորում | Ընդամենը | Դրամաշնորհ | Համաֆինանսավորում | Ընդամենը |
| 1 | Գույք | 6,895,627 | 766,181 | 7,661,808 | 6,895,627 | 766,181 | 7,661,808 | - | - | - |
| 2 | Համակարգչային և այլ սարքավորումներ | 22,553,100 | 2,505,900 | 25,059,000 | 22,553,100 | 2,505,900 | 25,059,000 | - | - | - |
| 3 | Գրենական պիտույքներ | 559,662 | 62,185 | 621,847 | 559,662 | 62,185 | 621,847 | - | - | - |
| 4 | Ծրագրային ապահովում և էլեկտրոնային ռեսուրսներ | 32,472,077 | 3,608,009 | 36,080,086 | 32,455,928 | 3,606,215 | 36,062,143 | 16,149 | 1,794 | 17,943 |
| 5 | Խորհրդատվական ծառայություններ (ազգային և միջազգային) | 9,180,000 | 1,020,000 | 10,200,000 | 9,180,000 | 1,020,000 | 10,200,000 | - | - | - |
| 6 | Սեմինարների, աշխատաժողովների, վերապատրաստումների կազմակերպում | 4,320,000 | 480,000 | 4,800,000 | 4,320,000 | 480,000 | 4,800,000 | - | - | - |
| 7 | Գործողում փորձի ձեռքբերման նպատակով | 3,135,069 | 348,341 | 3,483,410 | 3,135,069 | 348,341 | 3,483,410 | - | - | - |
| 8 | Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ | 8,704,350 | 967,150 | 9,671,500 | 8,704,345 | 967,159 | 9,671,504 | 5 | (9) | (4) |
| 9 | Այլ ծախսեր | 39,600 | 4,400 | 44,000 | 32,400 | 3,600 | 36,000 | 7,200 | 800 | 8,000 |
| | Ընդամենը | 87,859,485 | 9,762,166 | 97,621,651 | 87,836,131 | 9,759,581 | 97,595,712 | 23,354 | 2,585 | 25,939 |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 14-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամաշնորհային գործառնական հաշվի հաշվետվություն

ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ 2016թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | - | |
| Դրամաշնորհի ստացում ժամանակաշրջանի ընթացքում | 87,825,473 | |
| Այլ ստացված միջոցներ | 25,920 | |
| | 87,851,393 | 87,851,393 |
| Նվազեցնել. ԾԻԳ-ին ետ փոխանցում ժամանակաշրջանի ընթացքում | | (15,262) |
| Դրամաշնորհային գործառնական հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 87,836,131 |
| Վերջնական մնացորդ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 87,836,131 | |
| | 87,836,131 | 87,836,131 |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 87,836,131 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 14-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

# Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվություն

ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ 2016թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ | | - |
| Ավելացնել.Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | | - |
| Համաֆինանսավորման ստացում ժամանակաշրջանի ընթացքում | 9,762,165 | |
| Այլ ստացված միջոցներ | 2,880 | |
| | 9,765,045 | 9,765,045 |
| Նվազեցնել. Համաֆինանսավորման ետ վերադարձ ժամանակաշրջանի ընթացքում | | (5,464) |
| Համաֆինանսավորման գործառնական հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 9,759,581 |
| Վերջնական մնացորդ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | - |
| Ավելացնել.Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 9,759,581 | |
| | 9,759,581 | 9,759,581 |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 9,759,581 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) - (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 14-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը հիմնադրվել է 1922 թվականին, իսկ 1948 թվականից կրում է Խաչատուր Աբովյանի անունը: ՀՊՄՀ-ն «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի իրավահաջորդն է: Այժմ ունի 10 ֆակուլտետ, ավելի քան 60 մասնագիտություն՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում: ՀՊՄՀ կենտրոնական կրթահամալիրը գտնվում է Երևանում:

ՀՊՄՀ գործունեության նպատակներն են՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական, լրացուցիչ, շարունակական կրթության կազմակերպումը, կրթության և մանկավարժության, գիտության, մշակույթին, սոցիալական ոլորտներում բարձր որակավորմամբ, աշխատաշուկայում միջազգայնորեն մրցունակ մասնագետների պատրաստումը, վերապատրաստումը, մասնագիտական որակավորման բարձրացումը, մանկավարժական, հումանիտար, մշակութային հասարակական գործունեության իրականացումը:

ՀՊՄՀ կառավարման մարմիններն են՝

- ՀՊՄՀ հոգաբարձուների խորհուրդը,
- ՀՊՄՀ ռեկտորը:

ՀՊՄՀ կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: ՀՊՄՀ ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ռեկտորը:

Համաձայն ՀՊՄՀ և «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի (ԾԻԳ) միջև 2016թ. դեկտեմբերի 23-ին կնքված Դրամաշնորհային 8/16 CIF պայմանագրի և 2019թ. ապրիլի 17-ին կնքված վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիր 6-ի (Պայմանագիր)՝ ՀՊՄՀն իրականացնում է «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» դրամաշնորհային ծրագիրը (Ծրագիր): Ծրագրի բյուջեն կազմում է 97,621,650 ՀՀ դրամ, որից 87,859,485 ՀՀ դրամը տրամադրվելու է դրամաշնորհային միջոցներից, իսկ 9,762,165 ՀՀ դրամը՝ ՀՊՄՀի համաֆինանսավորման միջոցներից: Որպես դրամաշնորհային ծրագրի վերջնաժամկետ սահմանված է 2019թ. նոյեմբերի 30-ը:

Ծրագրի նպատակն է ՀՊՄՀ-ում ժամանակակից կրթական մարտահրավերներին համապատասխան նորարարական գործնական ու հետազոտական հմտություններով և կարողություններով հարուստ մասնագետների պատրաստում նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում:

Դրամաշնորհային ծրագրի առանձնահատուկ նպատակներն են՝

- Նորարարական տեխնոլոգիաներով հագեցած մուլտիմեդիոն լաբորատորիայի ստեղծում,
- Ժամանակակից ուսումնական միջավայր ապահովող մուլտիմեդիոն և հետազոտական լսարանների ստեղծում,
- Էլեկտրոնային հարթակի ստեղծում նախադպրոցական և տարրական դասարանների երեխաների ուսուցմանն ուղղված էլեկտրոնային ուսումնաօժանդակ նյութերի ներդրմամբ,

- Դասախոսների և ուսանողների նորարարական գործնական և հետազոտական հմտությունների զարգացում,
- Վերապատրաստումների կազմակերպում դասախոսների և ուսանողների համար՝ ուղղված նորարարական գործնական և հետազոտական հմտությունների զարգացմանը:

ՀՊՄՀ գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ կապված աշխատակիցների քանակը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 4:

# 2 Պատրաստման հիմքերը

## 2.1 Համապատասխանություն

Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև Դրամաշնորհային 8/16 CIF պայմանագրի և ՆՄՀ ղեկավար ձեռնարկի համապատասխան հոդվածների պահանջներին համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

## 2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է ՀՊՄՀ գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և ՀՊՄՀ գործարքների տնտեսական բովանդակությունը: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա միավորը:

## 2.3 Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորում

Պայմանագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Դրամաշնորհի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ծրագրի ավարտի դրությամբ չօգտագործված, ետ վճարված, կամ ետ վճարման ենթակա գումարը նվազեցվում է «Դրամաշնորհի կուտակային ֆինանսավորում» գումարից: Ի լրումն՝ ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին մասին հաշվետվությունում:

## 2.4 Դրամաշնորհի ծրագրային ծախսեր

Դրամաշնորհային ծրագրի ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Դրամաշնորհային ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ակտիվներում: Ի հավելումն՝ ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռքբերված և ծախսերում ներառված գույքը և սարքավորումները հանդիսանում են ՀՊՄՀ սեփականությունը: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռքբերված հիմնական միջոցների տարրերը չեն ճանաչվում որպես այդպիսին և դրանց նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում: Փոխարենը դրանց սկզբնական արժեքը բացահայտվել է ծանոթագրություն 6-ում:

## 2.5 Պլանավորված ծախսեր

Դրամաշնորհային ծրագրի պլանավորված ծախսերն իրենցից ներկայացնում են դրամաշնորհային պայմանագրով նախատեսված ծրագրի ընդհանուր բյուջեն, որը բաղկացած է դրամաշնորհային միջոցներից և համաֆինանսավորումից:

# 3 Դրամաշնորհային ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն դրամաշնորհային պայմանագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. նոյեմբերի 30-ը:

# 4 Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորում

| ՀՀ դրամ | 2016թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար |
|---|---|
| Դրամաշնորհային միջոցներ | |
| ԾԻԳ ֆինանսավորման միջոցներ | 87,825,473 |
| Ետ վճարված գումար | (15,262) |
| | 87,810,211 |
| Համաֆինանսավորում | |
| ՀՊՄՀի համաֆինանսավորման միջոցներ | 9,762,165 |
| Ետ վճարված գումար | (5,464) |
| | 9,756,701 |
| Ընդամենը | 97,566,912 |

# 5 ԾԻԳ-ի կողմից տրամադրված դրամաշնորհային միջոցների և ՀՊՄՀ կողմից փոխհատուցումների համադրում

| ՀՀ դրամ | ՀՊՄՀ | ԾԻԳ | Տարբերություն |
|---|---|---|---|
| Փուլ 1 | 17,254,315 | 17,254,315 | - |
| Փուլ 2 | - | - | - |
| Փուլ 3 | 23,453,510 | 23,453,510 | - |
| Փուլ 4 | - | - | - |
| Փուլ 5 | 14,815,854 | 14,815,854 | - |
| Փուլ 6 | 24,061,996 | 24,061,996 | - |
| Փուլ 7 | - | - | - |
| Փուլ 8 | - | - | - |
| Փուլ 9 | 8,239,798 | 8,239,798 | - |
| | 87,825,473 | 87,825,473 | - |
| Ետ վճարված գումար | (15,262) | (15,262) | - |
| | 87,810,211 | 87,810,211 | - |

# 6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների տարրերը բաղկացած են Ծրագրի շրջանակներում ձեռքբերված գույքից, լաբորատոր և այլ սարքավորումներից և դրանց նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

Ձեռքբերված և ծախսերում ներառված հիմնական միջոցները հանդիսանում են ՀՊՄՀ սեփականությունը:

Ծրագրի շրջանակներում գնված հիմնական միջոցներն ըստ պատկանելիության ներկայացված են ստորև.

*ՀՊՄՀ*

Հիմնական միջոցներ

| ՀՀ դրամ | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|
| Գրասենյակային գույք և կահույք | 7,661,808 |
| Համակարգչային տեխնիկա | 23,403,000 |
| Այլ | 1,656,000 |
| | 32,720,808 |